ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՐ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

II

Ցունուար ամսից Թիֆլիսի երաժշտական աշխարհում երեք նորութիւններ լայնատեցան։ պ. Մասկանիի (Mascangni) «Գիւղական ասպետութիւն» (Cavaliere Rusticana) մի գործողութիւնից բաղկացած օպէրան, որ ինքը հեղինակը համեստաբար գուսաներգ (мелодрама) է անուանել։ 2) Արքունական թատրոնում կայացած համերգական (симфоническій) առաւօտը և 3) «Ֆաուստ» օպէրայից երկու գործողութիւն հայերէն։

Թէ ինչպէս կատարուց «Գիւղական Ասպետութիւն» օպէրան, դորա մասին ես չեմ խօսիլ. այնքանը միայն կասեմ, որ ի բաց առած տիկ. Զարուդնայայն, բոլոր մնացած դերակատարները սիրողներ էին։

—Սիրողներ ի՞նչ բանի՝ գուցէ հեգնօրէն հարցնելու լինիք դուք։

Սակայն ձեր արած հարցին ես համեստութիւնից կը լռեմ։

Թէև լիշած օպէրայում շատ քիչ ինքնուրոյնութիւն կայ և եղանակների մեծ մասը, մինչև անգամ նուագախմբելու ձևը (այսինքն նուագախմբական գործիքների իրար հետ ձայնակցելու ձևը) փոխ է առած մինչև այժմ նշանաւոր օպէրաներ գրողներից՝ ինչպէս Բիզէ, Վագներ, Վերդի և այլն, բայց այնու ամենայնիւ չի կարելի իսկոյն և եթ չը նկատել, որ այդ օպէրան գրած է տաղանդաւոր, թէ և դեռ չ'ամրացած ձեռքով։ Որովհետև Մասկանիին դեռ շատ երիտասարդ է, կարելի է դրականապէս ասել որ նրան փայլուն ապագայ է սպասում։ «Գիւղական Ասպետութիւն» օպէրայում երաժշտութիւնը շատ քաղցրահնչիւն է (ինչպէս և բոլոր իտալական օպէրաներում) և նիւթի (сюжетъ) համակրելիութիւնը մասամբ ի նկատի ունենալով մեծ հետաքրքրութեամբ է լսում։ Իսկ նիւթը երաժշտութեան համար շատ չնորհակալ է։ Երիտասարդ գեղջկուհու խաբած և ոտնակոխ արած սէրը, նորա վրէժը, նորա սիրեկանի մահը մենամարտութեան ժամանակ, երիտասարդ գեղջկուհու վհատութիւնը և ամենը

նոյն հոգով։ Պարոն Իպպոլիտով-Իվանով շատ աջող կառավարեց օպէրան։ Նուագախումբը անպայման լաւ էր։ Այդ օպէրան երեք անգամ դրւեց Արտիստական ընկերութեան բեմի վրայ։ Ի հարկէ այստեղ էլ նուագախմբական մասերը, ներածութիւնը և երկրորդ պատկերի անտրակտը, [1]) ներկայ եղողներից մեծամասնութիւնը բոլորովին անուշադիր թողեց։ Ես աւելորդ չեմ համարում մէջ բերել տեղի ունեցած հետեւեալ կոմիկական դէպքը։ Առջեւ նստած էր «Արտիստական ընկերութեան» ամենօրեայ հիւրերից (завсегдатай) մէկը որը երկրորդ պատկերի անտրակտի կատարելու ամբողջ ժամանակը բաւական յարմար և մինչև անգամ աջող գտաւ իրա մօտ նստած մի կնոջ բարձրաձայն բացատրելու սովեալների օգտին վիճակախաղի ողջ տոմսակի և նրա կտրոնների զանազանութիւնը։ Նրա խօսակից տիկինը բարձրաձայն ծիծաղում էր։ Չնայած որ մի քանիսը բողոքում էին իմ հարևանիս անտեղի խօսակցութեան դէմ, անհանգիստ հիւրը չէր կարողանում իրան զսպել և, տարօրինակ բան, նրա հետ խօսող տիկինը այն ժամանակ միայն կատարելապէս ըմբռնեց տոմսակի և կտրոնի մէջ եղած զանազանութիւնը, երբ անտրակտը վերջացաւ։ Հասարակութիւնը սկսեց ծափահարել և անտրակտի կրկնութիւնը պահանջել։ Անհանգիստ հարևանս ինձ դարձաւ հարցնելով.

—Ինչպէս է, լա՞ւ է։

—Հիանալի է, պատասխանեցի ես. և երեւակայեցէք՝ իմ խռովայոյզ հարևանս սկսեց մեզ հետ ծափահարել և աղաղակել «bis, bis»

Փետրւար 14 ին համերգական նուագահանդէսը պ. Իպպոլիտով-Իվանովի կառավարութեամբ ընդհանրապէս հարթ անցաւ և մեծ էր զարմանքս՝ թատրոնը լի տեսնելով։ Կատարւեցին «Լօէնգրինի» օպէրայի ներածութիւնը հեղ. Վագների, Բէթհովէնի № 4 կոնցերտը, Չայկովսկու № 2 սիմֆոնիան և մի քանի ուրիշ բաներ։ Դրանցից անպայման կերպով ամենագրաւիչն էր Բեթհովէնի կոնցերտը, որը կատարեց պ. Մասլովսկին նուագախմբի ձայնակցութեամբ։ Բայց կոնցերտի կատարելը հեռու էր անպարսաւելի լինելուց։ Պարոն Մասլովսկին լաւ տեխնիկա ունի, բայց նրա տուշէն (այսինքն ածելու ձևը) կոպիտ է, բոլորովին զուրկ այն բանից ինչ որ ռուսերէն՝ пѣвучесть է կոչւում։ Անուամենայնիւ այդ կոնցերտը հասարակութեանը դուր եկաւ։ Ամենաաջող կատարածը պէտք է համարել՝ բացառապէս նուագախմբական մի գործք՝ Չայկովսկու սիմֆոնիան։ Մեր սովորական թատրոնական նուագախումբը, որը սիրողներով ստուարացած էր, փորձառու դիրիժորի կառավարութեամբ յաղթեց արւեստական կեր-

[1]) Մի քանի օպէրաներ, բացի ընդունուած ներածութիւններից ունեն նաև փոքրիկ ներածութիւններ բոլոր գործողութիւնների համար ջոկ-ջոկ, որոնք (այդ ներածութիւնները) անտրակտ են կոչւում։

պով կազմած այդ գրածքի՝ բոլոր դժարութիւններին և ընդհանրապէս ֆուրոր գործեց։

Բայց ինչ ահագին անդունդ կայ Բեթհովենի և Չայկովսկու գրածների մէջ։ Ասենք Չայկովսկին իսկի լաւակնութիւն չունի համեմատելու, բայց այնուամենայնիւ այդ երկու կոմպոզիտորների գրածքների կատարելու ժամանակ նրանց մէջ եղած նշանաւոր տարբերութիւնը չի կարող աչքի չ'ընկնել։ Ամենից առաջ Բեթհովենի բոլոր գրածքներում աչք է զարնում հանճարի կորովը, երաժշտական մտքերի խորութիւնը, կնոջ ձեւերի գեղեցկութիւնը, վայելչութիւնը, երաժշտական գործիքների հրաշալի միաւորութիւնը։ Չայկովսկու մտքի կորով գրէթէ չ'կայ, նրա գրածքներում գլխաւոր դերն է խաղում էրուդիցիան (այսինքն երաժշտութեան լայնածաւալ գիտութիւնը) բայց նրա երաժշտական մտքերը լաճախ հասարակ (banal, банальный) են և մինչև անդամ գռեհկական են։ Օրինակի համար՝ վիշեալ սիմֆոնիայի վերջին մասը։ Բայց այդ բոլորը փոխարինւում է, ինչպէս ես վերև վիշեցի, էրուդիցիայով, գիտնականութեամբ և երաժշտական գործիքների գիտուն կցորդութեամբ (сочетание).

Այդ պատճառով զարմանալի չէ, որ այժմեան նշանաւոր երաժիշտների մէջ (մանաւանդ Արևմտեան Եւրոպայում) գտնւում են մարդիկ, որոնք Չայկովսկու գրածքները չեն սիրում։ Բայց դուք ոչ մի տեղ, ոչ մի երկրում և ոչ մի երաժիշտ չէք գտնիլ, որը Բեթհովենի դէմ գէթ մի քան առարկէր։

Հայերէն «Ֆաուստի» մասին մի այլ անդամ։